

ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

Ազգի մը ապագայ կեանքի
լուսաբերման առաջին
պայմանն է Միութիւնը :

« Միութիւն » քամեն
տեղ ձրի կը զբոսնի :

ՀԱՍՏԷ

M. ARCHAM

Poste Restante

ATHENES (Grèce)

Փոսթին ծախքը խմբագր-
ութեան կը պատկանի :

Ա. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1896 ԱԹԵՆՔ

ԹԻԻ³

ԿՊՈՒՍԻ ՄԵԾ ՑՈՅՑԸ ԵՒ ՀԱՅԵՐԻ ԸՆԴՀ. ԿՈՏՈՐԱԾԸ

Գաղափարական Յեզափախ. կուսակցութիւնը՝ որ ներքին այժ Գոյա-ցնելով ժամանակէ մ'ի վեր լըջութեամբ և խիստ գաղտնապահութեամբ կ'աշխատէր, կազմակերպեց վերջապէս նշանաւոր ցոյց մը և գործողութեան Թոշառոս 14 Չորեքշաբթի օրը: Որով ցոյց տուաւ իր Գոյութիւնը ամբողջ հայ հասարակութեան և ընդհ. սարսափ արտայայտեց արժանապէշատակ խաղիքների մայրաքաղաքը:

Նոյն օրը ցերեկուան (ըստ երեւոյ.) ժամը մէկին 25 հայ յեզափախ. տն-նուրաց հերոսներ՝ զանազան թաղերէ համախմբուած Օսմ. Պանքայի գուռը, իբրեւ յաճախող դրամ փոխելու պատուարիով ներս մտած և դուռը փակել տալով սկսել են ուժանակի և վեց հարածեանների կրակներ տեղացնել թուրք զօրքերի վրայ (1): Միևնայն ժամանակ վայրենի թուրք խուժանը Բարձրագոյն հրամանով արդէն նախապատրաստուած և ամբողջ 8 ժամ հայերը կոտորելու հրաման ստացած, երկաթ՝ գառաղան և այլն զէնքեր ի ձեռին յանկարծ կը յարձակին անդէն և անպաշտպան երթեկեկող անմեղ հայերի վրայ և կսկսին անխնայ կոտորել ամբողջօրը: Արիւնարբու մարդկային հրէշներն ասով ալ իրենց վայրագ յուզումը չհանդարտեցնելով իբրեւ կատա-

(1) Գոյցին մանրամասնութիւնը ամէն հայերի ծանօթ ըլլալով՝ աւելորդ կը համարենք հրատարակել:

ղի գաղափարներ վիշը կը յարձակին խաների, վաճառատների և սեղանա-տոների գրասենեակների վրայ, սրոնց երկաթեայ դռները կոտորելով ներս կը մտնեն և պահապան հայերն անխղճօրէն սպաննելէն յետոյ գտնուած ապրանքներն և դրամներն աւարի կռուներ թուրք զօրքերի աջակցութեամբ: Այս ամենը կատարւեցան Եւրոպայի Մեծ Տէրութեանց գեղապանների աշաց առջև ի նախատրուա Բրիտանի-ութեան:

Թէև սպանուած հայերի թիւն որոշապէս յայտնի չէ, բայց ըստ Եւրոպական թերթերի 10-12 հազարի կը հասնի:

ՑՈՅՑԻՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Յեզափախական այս շարժումը լաւ կազմակերպութեան մ'արդիւնք էր, հետևապէս կը յուսացուի թէ՛ անտա-րակոյս պիտի տեսնեայ իւր օգտակա-րութիւնն եթէ վերջին խաբէրայութեան մ'ալ չը գահալինք: Գու՛մ - գա-րուի առաջին ցոյցը, Ստամբուլի կոտորածը և անցեալ տարիի Պապ-Ալիի ցոյ-ցը որ մէկը միւսին յաջորդելով մեր բազմատեսակ ցաւերը դարմանելու յոյս կը ներշնչէին. կարծելով թէ՛ Եւ-րոպայի բրիտանական ըսուած Մեծ-Տէրութիւնները պիտի օգնու-թեան պիտի հասնին և պիտի փրկեն մեզ մեր բազմադարեան անհաշտ թշ-նամբի ճիրտներէն. այսուհանդերձ օրեր ամիսների և ամիսներ տարիներ յաջորդեցին, իսկ Եւրոպայի շահագէտ քաղաքականութիւնը Դիւանա-գիտական անխնայ ազմուկ մը բարձ-րացնելով՝ ստիճանափակ շրջանի մէջ լոկ աննպատակ զեկուցադրեր փոխա-նակելով միայն անցուց և հազարաւոր անմեղ տղամարդեր Մանկուլեան վալ-

րենի ցեղի սրին և հրացանին տակ գահեց:

Եւրոպայի այս անանկալ ան-տարբերութիւնը՝ անխիղճ թուրքի վայրենական ոյժերը զօրացուց, համար-ձակութիւնը ընդարձակեց և մուսուան դուրքներ սաստկացուց, հետևապէս նա՛ սկսաւ ազատ համարձակ անոր աչքի դէմ խաղիլ նուաճիլ անտէրունջ հայերս. կախաղանի, արսորի և ձեր-բակալութիւնների դրութեամբ:

Իրաց այդ վիճակը անցեալ ցոյ-ցէն իվեր անընդհատ շարունակելով՝ օրական 40-50 հայերի կիսնք կը փը-ճանար, գառառների մէջ օր ըստ օրէ թուրք խուժանի յուզումը սաստկա-նալով ընդհ. կոտորած կը սպառնար, նոյն իսկ առանց նոր ցոյցին և մեր կորուստը կոտորածի թաւն խիստ մեծ պիտի ըլլար:

Ահա այս անհանդուրժելի խժոժ-ութիւնները բնականաբար տեղի ու-րին նոր ցոյցի մը կազմակերպութեան, որուն թէև խիստ քիչքը մասնակցեցան միայն անոնք՝ որ պարտաճանաչ հայ-րենասէրներ և ճշմարիտ յեզափախա-կաններ էին, ջանքախնդր վայրագ թուրքի անտանելի լուծը իրենց վայ-րահակ գրուիւր բարձրացուցած յառաջ միջուցան և ինքնայոժար կամբով ճա-կատամարտի վայրը իջնելով յօգուտ ընդհ. հայութեան կենսական շահերի նահատակուցան, խառնելով իրենց նուիրական արիւնը մինչև ցարդ կո-տորուող հազարաւոր հայ մանկամար-դերի վտակահեղձ արեանց հետ: Թէև անոնց թանկագին կեանքը անհետա-ցաւ, բայց իրենց զիջապանութեամբ ցոյց տուին ընդհ. աշխարհի թէ՛ 19րդ դարու հայերն ոչ այլևս ստրուկ ինչ-պէս կը կարծէին, այլ իրենց նախա-հայերի նման վեհանձն են, պիտաղն

և արժանի ազատութեան : Ընդհանրապէս խնդիրն՝ որ իբրև մի հին և անպէտ տակաւ գլխաւորած մի անկիւն կը մնար՝ այսօր պարզուած է Եւրոպայի դիւանագիտական դաշինքներէ առջև և դարցած է օրուան խնդիր : Ահա ասոնք են վերջին ցոյցի խնդիրն օգուտները, զորս կը պարտինք մեր կենդանի և մահացեալ նահատակներին :

Յայցին այս օգուտական կէտերը խոստովանելով հանդերձ՝ պէտք է անոր հետեանքով մեր տուած ծանրապիտ Կրօնականներն ալ նկատի առնել և գիտնալ թէ՝ «ս՛վ է պատասխանատուն» կը թողունք զայդ բացատրել Միութիւնի յաջորդ թուով :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

14 Օգոստոս 1896 4. Պօլիս

Սիրելի եղբայր

Տրտմութեամբ կը գրեմ այս նամակս և Յաւօք սրտի կը խոստովանեմ որ այսօր կէս օրէն յետոյ, այսինքն 2 ժամ վերջ տեղի պիտի ունենայ՝ այն սարսափելի Յոյճը, զոր կազմակերպեց Պաշտակցական կուսակցութիւնը, «ս՛վ գիտէ թէ՛ քանի հազարաւոր անմեղ տղայ և կին թշնամույն սրէն պիտի անցնին դարձեալ, միայն Աստուած գիտէ : Ընչակեան կուսակցութեան վարչապետները դիմելով Պաշտակցականի վարչապետներուն, առաջարկեցին որ այս Յոյճը յետաձգեն և խորհուրդ ընելով քիչ մը ժամանակ վերջ իրենք ալ մասնակցին և մէկ տեղ ընեն Յոյճ մը. բայց Պաշտակցականներու վարչապետները մերժեցին ըսելով թէ՛ մեր ոյժը մեզի համար բաւական է և Ձեր անցեալ տարուան պակաս թողածը մենք պիտի լրացնենք : Վերջապէս մեր ազգի մէջ քանի մը ինքնահաւան մարդեր դարձեալ այսչափ ժողովրդի արիւն պիտի մտնեն : Աստուած վերջեր նիս բարին կատարէ :

Եղբայր «Միութիւն» թերթերու փափաքողներ շատ կան, բայց քիչ կը զրկես, եթէ ողջ մնամ այս անգամ շատ կէկ զրկէ :

ՔԱՂՅՐ

* * *

Այս տխուր նախադրամիջոցներով լեծուն տողերը գրողը մեռած է հիմա : Ինքն ալ կորսուած է այն հազարաւոր նահատակ-դիակներու կոյ-

տին մէջ, զոր թուրք բարբարոսութիւնը դիզեց, քաղաքակիրթ կոչուած Եւրոպայի անտարբեր աչքերու առջև :

Ո՞ր մէկը լանք մեր եղբայրներէն :

Սերոբէ Մուրատեան, այն որ այս տողերը գրած է, «Միութիւն» թերթագիրներէն Ռ. Թ. Մուրատեանի եղբայրն է : Ղալաթիա, Սիմօնեան խանին մէջ ապաստանած, մէկ քանի ընկերներով, ամբողջ քառասուն ժամ կուռած են թուրք խուժանին ու թուրք զինուորներու դէմ : Վերջապէս վառօթ և փամփուշոյ ուսուցած է . . . զօրքերը յարձակած են խանին վրայ, գուռը խորտակած և եկած սուխնահար մեռցնելու քաջ հայրենասիրները : Այդ ահեղ վայրկեան, Սերոբէ, որ հերոսի մը պէս կուռած էր, չէ ուզած մեռնիլ Տաճիկ սուրերով : Այդ նախատինքն չէ ընդունած և խոյսցած է դէպի պառուհան ու «կեցցէ՛ ազատութիւն» գոչելով՝ նետուած է փողոց, գլուխը ջախջախելով սաղայատակներուն վրայ :

Մինչ Սերոբէի գէնը ձեռքը կը կուռէր ու կը մեռնէր, անդին, Պոլսոյ կողմը, խուժանը թողահար կը սպաննէր Սերոբէի եղբայրը՝ Յակոբոս՝ որ խաղաղիկ կ'անցնէր փողոցէն :

Այսպէս, երկու եղբայրներէն մէկը հերոսներու հետ միասնա մեռնելու համար, միւսը զոհերու հետ :

Երկուքն ալ գաջին այն անթիւ նահատակներու և հերոսներու բանակին մէջ, որոնք աշխարհիս ըսկիզբէն ի վեր մեռած են ազատութեան համար :

Իրենց արիւնը անշուշտ պարսպ տեղը չթափուեցաւ : Աշխարհի մէջ անիրաւութիւն չկայ : Արդար դատ մը միշտ յաղթանակած է :

Եթէ շատեր կը տարակուսին ասոր, պատճառն այն է որ իրերը ու դէպքերը կ'ուզեն դատել խիստ կարճ ժամանակամիջոց մը սահման առնելով և չեն խորհիր թէ՛ ազգի մը կեանքը մարդու մը կեանքին հետ չի բազմապատկուիր, թէ՛ այսօր յեղափոխութիւն և վաղը անկախութիւն կ'արելի չէ :

Յունաստան քանի մը տարուան մէջ շատաճաւ իր ազատութիւնը, ո՛չ ալ Պուլկարիա իրենը : Կրեոն 80 տարի է ի վեր կռիւ կը մղէ և Իտալիա տարիներով յեղափոխութեան մէջ ապրած է :

Հայկական յեղափոխութիւնը պիտի յաղթանակէ. — երբ. չենք գիտեր, գուցէ վաղը, գուցէ տասը տարիէն,

գուցէ յիսուն տարիէն :

Յատենք և սպասենք, կրկնեալ հէգ Սերոբէի վերջին մաղթանքը. «Աստուած վերջերիս բարին կատարէ» :

Վ.

(ՓԼՐԻՋԻ ՄԵՐ ԸՆԿԵՐԷՆ)

Փարիզ 10 Սեպտ.

Սիրելի ընկեր.

Այս պահուստ սրտամաղ կը ըստանամ՝ կը խորհրդածէի հետեւեալ հեռագրի վրայ, զոր հրատարակեցին այսօր Ֆրանսական լրագիրները :

«Լոնտոն», 3 Սեպտեմբեր. — Ահա Կառապի դեսպաններու կողմէ Մուլթանին ուղղուած Օգոստ. 27 ի հեռագրին ճիշտ բնագիրն :

«Այս տեղի դէպքերուն համար կը ցաւինք. պէտք է որ դադրին անմիջապէս, ապա թէ ոչ՝ թուրքիոյ և ձեր իշխանութեան վնաս պի ի բերեն» :

Մինչև ե՞րբ պիտի տեւէ անամթ Եւրոպայիներու այս քաղաքականութիւնը կամ . . . հանգէպ հապիթի կառավարութեան կամ հերոսախմբութեան . . . մինչև ե՞րբ թուղթն ու մուրաբէն՝ ծախի և վառօթի տեղ պիտի դարձան : Մուլթանը գիտէ Եւրոպ. կառավարութիւնները կաշառելու կերպն. առատ առատ պատուանշաններ և նուէրներ կը տեղան ամէն օր Պոլսէն դէպի Եւրոպայ և, պատուանշաններու շնորհիւ, Ֆրանսական կառավարութիւնը Մարսիլիոյ մէջ կը բանտարկէ՝ մեր «քաջասիրտ» եղբայրները. Թուսիա և Թուրանիա կը մերժեն ընդունիլ իրենց կրկին հայ դաշնակիցները . . . մէկդի կը թողուծ Եւրոպացուց ՔԱՂԱՅՐԻՍԻԹԻՒՆ, վասն զի լռելն ալ քաջալերել ըսել է, որով մարդասոյոջ գաղանն ամենայն համարձակութեամբ այրեց աւերեց երկիրն, ու նահատակեց հազարաւոր անմեղներ, Յաւիտենական նախատինք Եւրոպայ, պատմութիւնը թուրք պիտի նետէ առ մուրճ պիտի քսէ Եւրոպային ճակտին : Բայց, պատմութենէն առաջ, մենք պետք է նեանք այդ թուրք. մենք, հայերս, պէտք է քեզս ենք այդ մուրճ Եւրոպայիներու հակառակ, քանի որ անոնք անտարբեր ընթացք մը բռնեցին մեզի դէմ և քաջալերեցին անուղղակի կերպով մեր դարաւոր թշնամին, պէտք է որ վրէժ լուծենք, այո. ՎՐԷժ Եւրոպայիներէն իսկ : Պոլսոյ վերջին ցոյցը շատ

ԱՂԵՔՍԱՆԻՐԻՒՄ 6 Օգոստոս 1896

ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶՅՐԱԹԻՒՆ Է

Ժամանակէ մը ի վեր է որ Հայաստան մէջ մասնաւոր փափաք մը կար որ Յեղափոխական կուսակցութիւնները միանան, բայց ատենք լոկ խօսելով միայն անցան. իոկ հիմայ խօսելու, գրելու, վիճելու և հակառակութեան ժամանակը այլ ևս անցած՝ գործելու անմիջական պէտք կայ, քանի որ մեր թշուառ Հայրենիքը իր կիսամեռ ձայնով օգնութիւն կը գոչէ, տեսնելով վայրենի և դադան թուրքին անգուսպ կատաղութիւնը, որ կը սպառնայ իր զաւակներուն կեանքը աշխարհէս բառնալ: Իսկ միւս կողմէ խուլ և շահամոլ Եւրոպական անխիղճ դիւանադատութիւնը, սրուն վրայ յայտ դրած էինք, նա՛ վայրենի թիւրք ցեղին մեր վրայ տարած կոտորածներու, եղեռնագործութեանց և յաբաւակութեանց սրտածնդիկ տիտուր տեսարանին առջև լոկ հանդիսատես ներկայանալով խղճի կատարեալ հանդարտութեամբ կը դիտէ և կը թոյլատրէ վատ տղուկ թուրքին՝ որ անմեղ հայերիս արիւնը քամէ մինչև որ բոլորովին բնաջինջ ընէ զմեզ:

Ուրեմն մենք անտերունջ հայերս յորմէ՞ յուսանք. որո՞ւ դիմենք, զո՞վ ունինք, քանի որ ոչ Սլաւ ոչ Ռոմքական և ոչ ալ Պապական ենք որ գտնենք պաշտպանութիւն:

Ահա սիրելի Հայ եղբարք. այս իրական փորձերը կը հարկադրեն մեզ դիմել ի ն Բ Ն Օ Գ Ն Ո Ի Բ Ե Ա Ն. Թողելով մէկ կողմ մեր իրարու դէմ ունեցած խեղ ատելութիւնները, հակառակութիւնները և նախանձութիւնները, ձեռք ձեռքի տանք մէկ սիրտ մէկ կամք անվատ յառաջ՝ մղուելով բուռն զարկ մը տանք յեղափոխական սուրբ գործին ի սէր և ի յիշտակ մեր հաղարաւոր նահատակուած այն եղբայրներու, որոնք հերոսաբար ինկան մեր կեղտոտ թշնամոյն արին և գնտակներուն տակ ի սէր Ազգիս ազատութեան:

Եթէ մենք ալ անոնց պէս պարտաճանաչ ճշմարիտ հայեր ենք, այլ ևս չմնանք անտարբեր, չըլլանք ժամավաճառ և փութով միանանք՝ որ ժամ առաջ տապալենք մեր թշնամին ու վերածածանենք Հայկական ազատ դրօշը մեր տաժանակիր Մայր Հայաստանի Ս. Հոգին վրայ:

և կը տեսնենք մեր ազգայիններու և մանաւանդ հայութեան դատի համար գործող մարմիններու կուսակցական ոգին և խելքը: Իրեւն հայու գաւալներ, մեր ազգակիցներու կարեկցութեամբ տալնապօղներ, չենք կրնար հաշտուիլ մեր փրկութեան գործը բաւարարող ընկերութեանց անմիաբան ոգոյն հետ՝ քանի որ կարող ենք այլ ևս պարզ տեսնել թէ անմիաբանութեան վարակիչ միջբոլոր մեր ներքին ոյժերը կը ջլատէ, անկարող կացուցանելով մեզ՝ մարտ դէպի արտաքին թշնամին, այն՝ որ գիշեր ու ցերեկ կը ջանայ իսպառ ջնջել թորոգման տանց ցրուցան միացոր գնեւուն:

Յաւալի է արդարեւ. մեր այս. թէ քաղաքական և թէ ոչ քաղաքական թերթերու մեթոտը՝ որն ուրիշ բանի չի ծառայեր, եթէ ոչ պղտորել և չփութութեան ենթարկել մի բուռն անհովիւ ժողովրդեան, որոյ մեծամասնութիւնն չսնի տակաւին ինքնաճանաչութեան հեղինակութիւնն, որը հետեւող մ'է լոկ:

Ի՞նչ. երբ հայաստանի մէջ ամէն մի գիւղէ, մէն մի տնէ հսկելի ծուխն կը բարձրանայ, երբ բոցերու մէջ մեր ազգակիցներն կաճկանանան, երբ քոյրեր կ'առնան զուգին, կը բռնաբարւին դժոխային ամենասուր արարքներով, երբ հայ ապագայ սերունդն ալ դեռ որորանէն դուրս չեկած կը մեռնի հոն անխնամ, անմայր ու անտէր. պիտի չարտնականուի՞ մնալ առջի ազգաւեր անմիաբանութիւնն մեր վարչութեանց մէջ, ժողովուրդը պիտի չանիծէ՞ այս, երբ սթափելով բննէ և անանէ իւր քայքայուած վիճակն:

Ոչ. այլևս Միութեան խնդիրն ամենակարեւոր խնդիր մէ մեզ հաւար պիտի միանալ. միանանք, ժողովինք մեր ամբողջ ոյժն ու կարողութիւնը մեր ամենքիս բաղձացեալ նպատակին միայն ծառայեցնելու ենք զայն:

Առ այս, Միութեան գաղտնիքի և անոր իրականացման գործը «Միութիւն» թերթին իւր վրայ առնելով կը փարինք մենք անոր, նորա ծաւալմանը համար հայերիս մէջ, օգնելով և ջանալով և կը կոչենք միշտ կեցցէ «Մ ի Ո թ ի Ն»:

ՔԱԶԱԶՆ

Ամերիկայէն և վենետիկէն նամակներ ստացած ենք, բայց տեղի սըղութեան համար չը կրճինք այս թրուով հրատարակել:

լաւ եղաւ, թէ և մենք բաւական կուրուստ տուինք, սակայն թուրքերէն զատ՝ Եւրոպացիներուն ալ եղաւ. Եւրոպական առեւտրական հրապարակը բոլորովին գաղթեցաւ, ու Պոլսոյ մէջ Եւրոպացի քանի մը վաճառականներու խանութները կողոպտուեցան, թող մեռածները և վիրաւորները:

Այս չէ՞ սակայն իմ սպառնացած վրէժս. — ես կ'ուզեմ որ Եւրոպական պետութեանց մէկ քանիններէն վրէժ լուծենք արիւնով, «ակն ընդ ակն, արիւն ընդ արեան»: Այս է իմ աւետարանս, և այս պէտք է լինի մեր Յեղափոխականներուն, Աւետարանը:

Պէտք է ջախջախել Եւրոպական պետութեանց այն զլխաւորները՝ որոնք քաջալերեցին թուրքերը և դիւրացուցին հայկական հնդհանուր կոտորածը: Այ՛ո, թող ըսեն թէ «Հայը անիշխանական է»:

Թող Եւրոպացիք համակրութիւնը վերցունեն հայոց վրայէն. քանի որ իրենց համակրութենէն վնաս տեսանք աւելի քան թէ չափ: Եւրոպացիներէն ասանկով կրնանք վրէժ լուծել ասանկով կրնանք ցոյց տալ թէ մ'ենք ալ Ազգ մ'ենք և կուգենք մեր գոյութիւնը պահպանել: Եւրոպացիներու դէմ մեր ընկիւր այս ձեռնարկը պէտք է չուտով սկսիլ և շարունակել անընդհատ, մինչև որ քաղաքական մեծամեծ փոփոխութիւններ տեղի ունենան և յարգուին հայոց բոլոր իրաւունքները:

Մինչև հիմայ հաղարաւոր դոհեր տուինք. այս գործը կատարելու համար 20-27 անձնազոհներ կը բաւեն, որպէսզի մէկուս վտանգուած ատենը՝ միւսը յաջորդէ անմիջապէս: Կեանք կա՛մ մահ. կա՛մ պէտքեալորինք պահպանելով մեր գոյութիւնն ու պաշտպանելով մեր իրաւունքները, կամ մեռնինք ամենքս ալ քաջութեամբ դիմագրելով մեր բոլոր թշնամիներուն. թշնամիք կըսեմ, որովհետեւ մեր թշնամին միեւն թուրքը չէ, Եւրոպան ալ է:

Կ. ՔԱՂԱՏՍՈՅԻ

(ՊԵՐԼԻՆԻ ՄԵՐ ԸՆԿԵՐԻՆ)

ՊԵՐԼԻՆ 28 Օգոստոս 1866

Գերմանիոյ հայ ուսանողներուն էլ հասաւ ահա «Միութիւն» թերթի -2 թիւերն. որոնք կարդալով չենք կրնար չյայտնել լիովին մեր գոհանակութիւնն ու համակրութիւնն, քանի որ մեռութիւնս կատարելով կը կարգանք

Իսկ դուք . ո՞վ Յեղատի . կու-
ռակցութիւններու . կեդրոնապետներ .
այսչափ տարիներէ ի վեր միապետա-
կան դրութեամբ կը գործէք մեր տա-
րաբաղդ Ազգը փրկելու համար . ցա-
ւալի է մեզ ըսել թէ՛ ընդհ. Հայու-
թիւնը խաբած եւ ինքզինքնիկ ալ կը
խաբէք ձեռք երեւակայական խոստում-
ներով . քանի որ չէք միանար եւ հա-
մերաշխարար չէք գործեր : Այո՛ . դուք
լաւ գիտնալով հակառակ պարագա-
յին եթէ չհամակերպիք ժողովրդեան
այս հրաւիրին անոր բաղձանքներու
իրականացման խոչնդոտներ յարու-
ցանելով արեւելք լինիք , մեր Հայրենի-
քըա նպատմելի թշուառութեան պի-
տի մատնէք իւր քսելով թշնամոյն
պիւն եւ պիտի մնաք յաւէտ պատառ-
խանատու պատմական հին ազգու-
թեան մը առջեւ :

Ինչպէս մենք կուսակցական-
ներըս եւ մեզ հետ նշանաւոր գործիչ-
ներս Միութեան դադարաբաղկեցնե-
րէն , դուք ալ միացէք դարձեալ դուք
պիտի մնաք զեկալարներ քանի որ
դուք միայն երկու կուսակցութիւն-
ներդ կը աեանուիք Ազգ . հրապա-
րակին վրայ իբրեւ որոշ գործող
մարմիններ : Ձե՛ . որ եղբայր ենք
մենք եւ մէկ հայրենեաց իսկ հորա-
զատ զաւակներ : Միանանք , գործենք
մէկկուսակցութիւն միայն ունենանք եւ
գործենք վարչական դրութեամբ եթէ
թշնամիէն արարուելով բոլորովին փը-
ձանանք . պիտի ըսենք թէ՛ մեր սե-
ձակատապիւրն է : Ուրեմն միացէք ու-
րելի եղբարք միացէք , որովհետեւ
ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է :

Պ , Փ ,

(Վառնաի մեր ընկերէն)
1896 Սեպտ. 3 Վառնա

Սիրելի ընկեր :
Օգոստոս 14 լոգ . օրը վեր-
ջին տեսութիւնու եղաւ Ձեր եղբոր եւ իմ
անձնուէր ընկեր Սերսը աղայի հետ ,
որովհետեւ ինչպէս յայտնի է այդ օրը
որոշուած էր Գաշնակցական անվեհ
եւ անձնազոհ մեր քաջարի ընկերներու
աշխարհադժոխք ցոյցը միայն թէ ե-
թէ մեզ պարելու կէտ մ'ունենիք մեր եղ-
բարց գէժ այն ալ սա է թէ մեզ նկա-
տելով իբր անջատ մարմին կանխա-
մեզ լուր չտուած ըլլալնուն , աւաղ
մեր կողմէն իրար գոհուողներու թի-
ւը շատ մեծ եղաւ , Գ. Երեկոյ թրքա-
կան ժամ 11 ու կէսին միայն լուր տը-
ռեցաւ որով անձեռնհաս գտնուե-

ցանք մերայնոց ինքնապաշտպանութեան
եւ կամ թաքստեան հրահանգ ապրու :

Նոյն Գ. առաջաւան ժամ 4ին
Սամաթիոյ կողմէն որսառաց Հայկական
վրէժինիկը Բուսմը տեսնելու արժանի
կէտ մ'էր թէ ինչպէս Վոսիւրի ափանց
վրայ գեղերով խուժանը ժամադրուած
թրքական պիւժ կառավարութեան կող-
մէ , քալելով իրենց ձիադասներ գուն-
դազունդ գէտ Սամաթիոյ կը խոյա-
նային , գեռ ցոյց չեղած հաւաստի աղ-
բիւրներէ լուր առնելով ստուգեցինք
թէ մեր չէյի Բարթօ եւ իւր արքանեակ
Սուլթանընտիր վարչութիւնը գէտ քէն
3—4 օր առաջ լուր առած էին տեղի
ուսնեալիք ցոյցի մասին որով նա ալ
ձանշնալով հայ անվեհեր քաջերու
բազկաց այժը հրահանգած էր խու-
ժանը պատրաստուիլ իւր հետ վայրա-
գութեանց մասնակցիլ , տեսանք շատ
մը դատարկապորտներ որոնք Պալաթ-
իոյ պահակաւորները տարուելով զին-
ուեցան , ժամ 6 14 էր կը մեծադ-
ղորդ շառաձմամբ Պալաթիոյ խոնիրու
մաղազաներու գունդեր փակուեցան եւ
Օամ. Պանրայի ցոյցը սկսեց , ժողովուր-
դը սկսեց փողոցներու մէջ սարսափա-
հար առտ անդ փախչիլ , Ըամիաի կո-
նոնաւոր (Իթէ կրնայ ըսուիլ) եւ ան-
կանոն զօրքեր , ոտաթիւններ իւր Գ. մի-
լեւանդ խուժանն ձեռք ձեռքի տուած
ոկսեցին իրենց քառմեկի ոճիրները ,
ուր որ երկար խուժանն մէկտեղ պատ-
րաստ էին գաղթականներու կառքեր ,
եթէ մեր տեղ ներկայ լինէիք ինքզինք
նիդ Ափրիկէի եւ կամ Ռվիլիանիոյ մար-
դախուղ վայրենեաց մէջ պիտի կար-
ծէիք սակայն ստանք իրենց հրացան-
ների եւ ռեվոլվերների բոմբիւններու
խաղաղուցիչ ձայնիւրով աւելի զարհուրե-
լի էին , գիտէր Ըամիաը յիշափոխա-
կան հերոսներու կեդրոնները բայց կը
սոսկար անտնջմէ ու իրատէ հանած
էր ԸԱՅ անուըն ջնջելու , վայ թշու-
առ հայու գլխին մինչ անդին Պանգան
օրինաւոր պատերազմի բռնուած էր առ
գին միամիտ բռնակիրներ քարա-
փին վրայ ալիւրի եւ ածուխի բեռնե-
րու տակ քրտնիք կը թափէին , վայր-
կենական եղաւ նոյն գիւղիներու թա-
ւաղըր գետին խնաղը սրտածմիլի էր
տեսնել նոյն ձմեռալ յոշոտեալ կիսա-
մորթ մարմինները կառքերու մէջ ,
խուժանի մի խուժմը գիւղային ժպիտ-
ներով գիտի մը կը քաշուտէր միւսը
նոր մը սպաննելու կը աքնէր , մէկ
մասը մոլեղնած մահմէտի Վարձք մը
գործելու համար գիւղիները կը ձեծէր

փողոցները , կառքերը խուժանի ձի-
ադասները եւ ձեռները միօրինակ ա-
րեւաններկ , ուր որ հայու մը հանգի-
պեցան , փողիւնիւր ժանտաղմաներ զին
ւորներ եւ իրենց պաշտօնեաներ որոնք
պատերազմական (օրինաւոր) առիթնե-
րու վատարար երես դարձուցած փախ-
չուղներ միայն են հոս արեւմտեաներ դար
ձած իրենց սուրերով ու դէնքերով
յարձակելով անդէն , անպաշտպան եւ
միամիտ հայերու վրայ դիտապատու կը
փռէին ուր խուժանը յոշոտել կսկսէր :
Եթէ գէտքը կէտաւկէտ նկարագրեւ
պէտք լինի 500 թերթի ալ չպիտի բա-
ւէ ուստի նկատողութեան արժանի գը-
խաւորները յիշելով պիտի անձնիմ վա-
սնիք քար ըլլալու է մարդ որ առանց
սոսկում գրուանք ու յուզում գրալու
կարող լինի գրչի առնել :

(Շարունակելի :)

— Շնորհակալութեամբ ստացանք Տ.
Մ. Չերաքի «ԼԱՍՄԷՆԻ» պատ. թեր-
թի Սեպտ. 1 ի թիւը :

— ՊՈՒՐԿԱՅ (Պուրկարիա) Պ. Մուշկ
Աւադեան (Մշեցի) Ձեր ապահովագը-
րեալ նամակը ստացանք : Պ. Յովհա-
նը Վառնա մեկնած , իսկ Պ. Նաղա-
րը մտաւոր քաղաք մը դաձած գոր-
ծի սկսած է : Ձեր հոռոյն չէիք աւած
մեզ որ նամակով պատասխանէինք :

— Առաջիկայ թուով կը հրատարա-
կենք ի նպատ փախտածան հայերի
Բէլլենական կառավարութեան մա-
տուցած մարդասիրական ինամքնե-
րը եւ նորակալմ հայ յանձնած ողով
անխոնջ աշխատութիւնները :

— Վերջերս մենք գիտէինք թէ Լոն-
տոն Ընչակեան կուսակցութեան կեդ-
րոնին մէջ Նաղարայեկեանի եւ կուսակ-
ցութեան գործիչներ իմջեւ սատարի
երկապաւորութիւն մը ծագել էր , վեր-
ջինները Ընչակեան կառավարութեան
Միապետը եւ Միապետուհին գահակեց
ընելով յաջողքեր են կուսակցութեան
զեկը ձեռք բերել եւ սկսել են Ընչակի
հրատարակութեան . սակայն մեր ըն-
թերթողները թող չը զարմանան եթէ
տեսնեն երկրորդ «Ընչակ» մ'ալ իբրեւ
օրկան Նաղարայեկեան նորահաստատ
եւ պատանգամ բաժանալ փողոցա-
թիւն : Այս առթիւ մեր տեսութիւնը
աջող թուով :

— Տեղի սղութեան համար այս ան-
գամ լուրեր չհրատարակեցինք :

— «ՄԻՈՒԹԻՒՆ» ի 4 լոգ . թիւը լոյս պի-
տի տեսնել հոկտեմբ. 15ին :

— Տաւերու թերութեանց համար
ներողութիւն կը խնդրուի :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ—«ՄԻՈՒԹԻՒՆ» ի
Արտատնադէր Ա. ԳՕԳԻՐՆՈՍ